

Հայ վարքագրության երախայրիք Կորյունի հայտնի երկում Աստվածաշնչից կատարված կոչումների քանակը հասնում է քսանիննի, սակայն դրանցից միայն երեքն են (Սաղ. Լ 6, Գործք. Ա 1, Է 58) լիովին համաձայնում Ս. Գրքի հայ կանոնական թարգմանությանը: Վկայակոչումների ճնշող մեծամասնությունը մի շարք տեղիներում միանգամայն ակնհայտ տարբերություններ է երևան բերում՝ նույն այս, կանոնական սեպվող, թարգմանության համեմատությամբ: Ստորև հանդիպադիր բաղդատությամբ բերում ենք կորյունյան վկայակոչումներն ու Զոհրապյան հրատարակության համապատասխան տեղիների այն հատվածները, որոնք կորյունյան վկայակոչումների նկատմամբ ակնբախ տարբերություններ ունեն:

Սուրբգրային բոլոր տարրերցումները նշելիս օգտվել ենք Աբեղյանի հրապարակումից, որտեղ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2639 ձեռագիրը (1672 թ.) նշված է **Ե**, № 1891 ձեռագիրը (1774 թ.)՝ **Ե**, № 131 ձեռագիրը (1781 թ.)՝ **Ե**, № 3143 ձեռագիրը (1828 թ.)՝ **Ե**, իսկ ԺԴ դարում ընդօրինակված № № 3787, 3797 ձեռագրերը, որոնք «Ճառքնոցի» և «Վարքսրբոց» են, համապատասխանաբար նշված են **Ճ** և **Ճ** տառանիշերով: Զուգահեռաբար նշել են նաև Կորյունից օգտված Ագաթանգեղոսի Պատմության տիպիսյան հրատարակության² համապատասխան էջահամարները՝ **Ագաթ.** համառոտագրությամբ:

Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941 (քաղվածքներին հաջորդող էջահամարներն ու տողանիշ համարները այս հրատարակությանն են):

Աստուածաշունչ, մատենան Հին և Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ: Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլևայլ օրինակաց, հանդերձ կարևոր ծանօթութեամբք բնաբանին: Յաշխատասիրութենէ Տն. Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի...», Վենետիկ, 1805:

1) Միթէ իմաստնագոյն իցես քան զԴանիէլ. կամ իմաստունք խրատտութիւն խրատեցին զքեզ հանճարով իրեանց: Էջ 8, տ. 3—5:

Ե. չիք՝ խրատտութ:

չիք՝ խրատտութ
հանճարովն (Եզեկ. ԻԸ 3):

2) Այր ճշմարիտ, արդար և աստուածապաշտ, և որոշեալ յամենայն գործոց չարաց: Էջ 28, տ. 17—18:

այր անարատ՝ աստուածապաշտ՝ մեկնեալ յամենայն իրաց չարաց. (Յոր. Ա 8):

ուսումնասիրություններ» ժողովածուն, Երևան, 1976, էջ 40—73: **Ա. Զեյթունյան**, Աստվածաշնչի հին թարգմանության հետքերը Եդիշեի երկերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 2, էջ էջ 130—142: Սուրբգրային վկայակոչումների ուսումնասիրությունը նպատակ ունի վեր հանելու նաև Ե դ. հայերեն Աստվածաշնչի կանոնը. այս մասին տե՛ս **Ս. Վեբեր**, Ս. Գրոց յարգն ու արժեքը հին Հայոց քով, «Հանդես Ամսօրեայ», 1897, էջ 130—132, **М. Тер-Мовсесян**, История перевода Библии на армянский язык, Петербург, 1902, с. 191—192.

² Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց: Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց: Էջմիածին—Տիֆլիս, 1909:

3) Շնորհք Աստուծոյ, որ ամենայնի հոշակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս և զհոտ գիտութեան իւրոյ յայտնի առնէ մեք յամենայն տեղիս: Էջ 30, տ. 21—23:

b, c, d, e՝ միօք:

4) ո՞ր կարէ բիծ դնել ընտրելոց Աստուծոյ: Էջ 30, տ. 24—25:

5) Զհետ երթալք սիրոյ և նախանձաւոր լինել ամենեցուն հոգեւորացն: Էջ 32, տ. 18—19:

e և Վեներիկի 1894 թ. տպ. տողատակում՝ հոգեւորականացն:

6) Լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս. Էջ 32, տ. 22:

7) Հայեցարութ, (ասէ), ի զօրագլուխն հաւատոց, և ի կատարիչն Քրիստոս: Էջ 34, տ. 2—3:

e՝ հաւատոցն, b՝ Յիսուս:

8) Յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօսեցան զբանն Աստուծոյ, հայեցեալ յէս գնացից նոցա, նմանողք եղերութիւն հաւատոցն. Էջ 34, տ. 4—5:

9) Զայս խորհեցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ որ և ի Քրիստոս Յիսուս. Էջ 34, տ. 5—6:

10) Օրինակ առէք չարչարանաց և յերկայնամտութեան զմարգարէսն, որ խօսեցան յանուն Տեառն. զհամբերութիւն Յոբայ լուարութ, և զկատարումն Տեառն տեսէք. Էջ 34, տ. 9—11:

c՝ զչարչարանաց,
bc՝ երկայնամտութեան:

11) Միաբան հասանել ի չափ հասակին Քրիստոսի. Էջ 34, տ. 16—17:

12) Տրտմութիւն է ինձ և անպակաս ցաւք սրտի իմոյ վասն եղբարց իմոց

Աստուծոյ շնորհքն, որ ամենայնի հոշակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս Յիսուս... (Բ Կորնթ. Բ 14):

Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ: (Հռոմ. Ը 33):

Նախանձաւոր լերութ հոգեւորացն. (Ա Կորնթ. ԺԴ 1):

Լաւ է նախանձաւոր լինել ի բարիս յամենայն ժամ. (Գաղատ. Դ 18):

Հայեցութ
Յիսուս (Եբր. ԺԲ 2):

...որ խօսեցան ձեզ... (Եբր. ԺԳ 7):

Զայն ... իւրաքանչիւր ոք (Փիլիպ. Բ 5):

...առէք. եղբարք ... որք ... (Յակոբ. Ե 10—11):

Հմմտ. մինչև հասցութ ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց և գիտութեան որդւոյն Աստուծոյ. յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի: (Եփես. Դ 13):

... ինձ յոյժ...: Զի ուխտիւք խնդրէի, ես ինքնին նզով լինել ի Քրիստոսէ,

և ազգականաց: Էջ 40, տ. 17—18:
նա, ճք՝ ինձ յոյժ
ժ՝ չիք իմոց
նա, ճք՝ ազգականաց իմոց ըստ մարմ-
նոյ:

13) Յորժամ հեծեծեցես, յայնժամ
կեցցես. Էջ 48, տ. 4—5:
նա, ճք՝ ապա **փոխ**. յայնժամ:
հմմտ. Ագաթ. Էջ 150 և 419:

14) Առ (ասէ) քարտէզ նոր մեծ, և
գրեալ ի նմա գրչաւ դպրի. Էջ 55—56,
տ. 24—1, հմմտ. Ագաթ. Էջ 470:

15) Գրեալ գտեսիլդ ի տախնակի և
ի գիրս հաստատեալ: Էջ 56, տ. 1—2,
հմմտ. Ագաթ. Էջ 470:

16) Գրեցի յազգ ալ. Էջ 56, տ. 1—
2, հմմտ. Ագաթ. Էջ 448:

17) Տէր պատմեցէ գրովք ժողո-
վըրդոց. Էջ 56, տ. 5, հմմտ. Ագաթ.
Էջ 448:

18) Ելէք ընդ ամենայն ազգս. Էջ 56,
տ. 6, հմմտ. Ագաթ. Էջ 470: Հմմտ.
նաև անդ. Էջք 246, 342, 370:

19) Քարոզեցի անտարանս ընդ
ամենայն տիեզերս. Էջ 56, տ. 6—7,
հմմտ. Ագաթ. Էջ 448:

20) Եղիցի անդ աղբիւր բղխեալ ի
տան Դարթի. Էջ 58, տ. 10:

21) Մոռացայ զժողովուրդ իմ և
զտուն հօր իմոյ. Էջ 62, տ. 27—28,
հմմտ. Ագաթ. Էջ 437, 218:
e չիք՝ իմ:

վասն եղբարց և ազգականաց իմոց
ըստ մարմնոյ: (Հոռմ. Թ 2—3):

Յորժամ դարձցիս և յոգոց հանիցես,
յայնժամ կեցցես: (Եսայի Լ. 15):

հմմտ. Առ դու քեզ տոմս մի նոր մեծ
և գրեցես ի նմա գրչաւ առն ճարտա-
րի (Եսայի Ը 1): Առ դու քեզ քար-
տէս մատենի և գրեալ ի նմա զամե-
նայն բանս (Երեմիա ԼԶ 2):

հմմտ. գրեալ ի տախտակի և ի գիրս
(Եսայի Լ 8): Գրեալ գտեսիլդ զայդ
յայտնապէս ի տախտակս. (Ամբակ.
Բ 2)*:

Գրեցի այս յազգ ալ: (Սաղմոս ԾԱ
19):

ժողովրդեան (Սաղմոս ԶԶ 6):

Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք
զամենայն հեթանոսս: (Մատթ. ԻԸ 19):

... անտարանս արքայութեան...
(Մատթ. ԻԴ 14):

Եղիցի աղբիւր բացեալ տանն Դարթի:
(Զաք. ԺԳ 1)**:

Մոռա զժողովուրդ քո և զտուն հօր
քոյ. (Սաղմոս ԽԴ 11):

* Նկատի է առնված ոչ միայն Եսայի Լ 8-ը, ինչպես արձանագրվել է Արեղյանի հրատ. ծանոթագրութ. (Էջ 111. ծանոթ. 83), այլև Ամբակ. Բ 2:

** Արեղյանի հրատ. ծանոթագրություններում այս կետը շփոթմամբ դիտվել է իբրև հա- մատոտումն Եսայի Լ 25 (Տե՛ս անդ. ծանոթ. 89):

22) Յօրէնս տեառն խորհեացիս ի տուէ և ի գիշերի. էջ 76, տ. 16—17, հմմտ. Ագաթ. էջ 468:

23) Միտ դիր ընթերցուածոց մխիթարութեան վարդապետութեան, մի անփոյթ առնել զշնորհացդ որ ի քեզ են յայդ խորհեա և ի դոյն յամեսչիր: զայդ եթէ առնիցես, և զանձն ապրեցուցես, և զայնոսիկ, որ քեզն լսիցեն: էջ 76, տ. 18—21:

Բ՝ մխիթարութեանն, Ե՛՝ ապրեցուցանես,

Ը՛՝ որք քեզն:

24) Յորժամ տկար եմ վասն Քրիստոսի, յայնժամ զօրացեալ լինիմ. էջ 80, տ. 16—17, հմմտ. Ագաթ. էջ 443: ճա, ճբ՝ Յորժամ վասն Քրիստոսի տըկարանամ, զաւրացեալ լինիմ.

25) Լաւ ևս լիցի պարծել տկարութեամբս, զի բնակեցէ յիս զօրութիւնն Քրիստոսի. էջ 80, տ. 17—19, հմմտ. Ագաթ. էջ 443:

ճա, ճբ՝ Լաւ ևս լիցի... զի. **մնացյալը՝ չիք:**

26) Արթուն կացէք, զի մի ի փորձութիւն մտանիցէք. էջ 84, տ. 5—6, հմմտ. Ագաթ. էջ 445: Ե՛՝ արթուն կացէք, յաղօթս կացէք, զի...: Բ՝ փորձութիւնն:

յօրէնս նորա խորհեացի նա ի տուէ և ի գիշերի. (Սաղմոս Ա, 2):

... խորհեաց և ի դոյն կանխեսչիր ի դմին յամեսչիր... (Ա Տիմոթ. Դ 13—16):

հմմտ. Հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս և ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի, զի յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ. (Բ Կորնթ. ԺԲ 10):

... լիցի ինձ պարծել ի տկարութիւնս... (Բ Կորնթ. ԺԲ 9):

հմմտ. Արթուն կացէք և աղօթս արարէք, զի մի անկանիցիք ի փորձութիւն (Մատթ. ԻԶ 41): Արթուն կացէք և յաղօթս կացէք, զի մի մտջիք ի փորձութիւն (Մարկ. ԺԴ 11): Կացէք յաղօթս, զի մի մտանիցէք ի փորձութիւն (Ղուկ. ԻԲ 46):

Սուրբգրային վերոբերյալ վկայակոչումների բաղդատումը Զոհրապյան հրատարակության հետ մեզ թույլ է տալիս կատարել մի շարք ընդհանուր դիտողություններ, որոնք ի մի ենք բերում հետևյալ կետերում՝

Ա) Բառային հավելումներ, որոնք ընդգծում—ուժգնացնում կամ առավել ներազդու և ամբողջական են դարձնում վկայակոչման իմաստը. կետ 1՝ «խրատտութ» (սակայն Բ ձեռ. չիք), 2՝ «նշմարիտ», 5՝ «ամենեցուն»:

Բ) Բառային ետևառաջություններ կամ շարահյուսական տարբերություններ՝ կետեր 3, 6, 12, 24, 26:

Գ) Որոշ բառերի կամ բառակապակցությունների «բացթողումներ»՝ կետ 8՝ «ձեզ», 10՝ «եղբարք», 12՝ «յոյժ», «ըստ մարմնոյ» (սակա են ճա և ճբ ձեռագրերում), «զի ուխտիք խնդրէի, ես ինքնին նզով լինել ի Քրիստոսէ», 19՝ «արքայութեան», 23՝ «կանխեսչիր, ի դմին», 25՝ «ինձ», 22՝ «նա»:

Դ) Կանոնական թարգմանության նկատմամբ «խմբագրված կամ համառոտված» համարներ, որոնք ամենայն հավանականությամբ, կարող են թիվ թարգմանության հարազատ ու անաղարտ բեկորները լինել: Դիտելին այն իրողությունն է, որ քաղվածքների մեջ ինքնուրույն խմբագրման երևույթ ունեցող և, միաժամանակ, զոհրապյան հրատարակության հետ ակներև տարբերություններ հայտաբերող տասն կետեր (13, 14, 15, 18, 19, 21, 22, 24, 25, 26) համեմատելով Ագաթանգեղոսի Պատմության մեջ առկա Աստվածաշնչի համապատասխան համարների հետ, նկատում ենք, որ Վարքի քաղվածքները գրեթե համաձայնում են ագաթանգեղյան, Կորյունից բանաքաղված, վկայակոչումներին: Սակայն տարբերություններ այնուամենայնիվ կան: Տարբերություններ, որոնք արձանագրված լինելով 14, 16, 19, 23, 24, 26 կետերի նկատմամբ, թույլ են տալիս կատարել որոշ եզրակացություններ (տե՛ս ստորև 6-րդ դիտողությունը):

Ե) Ըստ երևույթին Կորյունը օգտվել է Աստվածաշնչի ասորերենի վրա հունարենով սրբագրված մի սկզբնական, փութով կատարված թարգմանությունից: Այլապես հնարավոր չէ, բացատրել եբրայաբանության (կամ ասորաբանության) և, նույնժամանակ, հունաբանության առկայությունը թեկուզ Յոր. Ա 8, Եսայի Ը 1 համարներում: Կորյունի Յոր Ա 8 վկայակոչման մեջ «արդար» բառը առկա է եբրայական բնագրում***, սակայն բացակայում է կանոնական թարգմանության մեջ (Զոհրապ. հրատ.): Եբրայաբանություն կարող է դիտվել ածականների հերթագայությունն իսկ: Եբրայերենն ունի «կատարեալ-արդար-աստուածավախ» հերթագայությունը, որի յուրատիպ համարժեքումն է կորյունյան «նշմարիտ-արդար-աստուածապաշտ» ածականների հերթագայությունն ու եռամիասնությունը: Զոհրապ. հրատ. մեջ ընդհանրապես բացակայում է «նշմարիտ» կամ «կատարեալ» ձևը: Եթե այստեղ՝ կանոնական թարգմանության մեջ հարակատար դերբայը ածականից անջատված է բութով, ապա Կորյունի մոտ այն զատված է շաղկապով. երևույթ, որ ավելի մերձիմոտ է եբրայերենին: Սակայն մինչդեռ նույն այս համարում եբրայերենն ունի «աստուածավախ» ձևը, սրա դիմաց Կորյունի և հունարենից թարգմանված Զոհրապ. հրատ. երկուստեք ունեն «աստուածապաշտ» ձևը: Այս համարում առկա Կորյունի և Զոհրապ. հրատ. համեմատելի արտահայտությունը՝ առաջինում՝ «որոշեալ յամենայն գործոց չարաց» և երկրորդում՝ «մեկնեալ յամենայն իրաց չարաց» ակնհայտնի տարբերություն ունի եբրայերենի «ետ քաշեալ յամենայն չարութենէ»**** բառակապակցության նկատմամբ: Եթե հայերենում խոսվում է մասնավորապես «չար գործերի» կամ «չար իրերի» մասին, ապա բնագրում՝ չարության մասին՝ ընդհանրապես: Նույնքան ուշագրավ է Եսայի Ը 1 վկայակոչումը, որտեղ «քարտես» բառի առկայությունը, որ հունարեն xartes (=մագաղաթ, մատյան, նամակ) բառի սովորական պատճենումն է, ըստ ինքյան կարող է հատկանշիչ վկայությունը լինել այն բանի, որ Կորյունը, ըստ երևույթին, օգտվել է ոչ թե Աստվածաշնչի «Յոթանասնից» կոչվող կանոնական թարգմանությունից, այլ նույն այդ թարգմանության որևէ խմբագրությամբ սրբագրված

*** Օգտվել ենք՝ Աստուածաշունչ Գիրք Հին և Նոր Կտակարանաց. Եբրայական և Յունական բնագիրներէն թարգմանուած. Պետրոս, 1970, նաև՝ Священные книги Ветхого Завета (еврейский текст с русским переводом). Т. I, Вена, 1877, т. II, Берлин, 1913. The Hebrew—English Old Testament from the Bagster Polyglot Bible, London, 1971.

**** Գրաբար թարգմանությունը մերն է (Հ. Բ.):

օրինակից: Սակայն բացառելի չէ և այն, որ Կորյունը «Յոթանասնիցի» հունարեն կանոնական թարգմանությունից օգտվել է ինքնուրույնաբար: Հիշելի, Յոթանասնիցի հունարեն տեքստում Եսայի Ը 1-ի *xartes***** բառի փոխարեն գտնում ենք *toi=lomos* (որ նույնպես նշանակում է «մատյան» կամ «մագաղաթի կտոր»), իսկ նույն *xartes* բառին հանդիպում ենք Երեմ. ԼԶ 2-ում: Յոթանասնիցի հետ նույնական է Զոհրապ. հրատ., որ, ըստ էության, հարազատ թարգմանությունն է առաջինի: Կորյունյան խնդրո առարկա վկայակոչման մեջ բացակայում է «Յոթանասնիցում» առկա *grafidi andropon* = «առն ճարտարի» արտահայտությունը, որի փոխարեն գտնում ենք «դպրի» (*grafeis*) ձևը: Ի դեպ դիտելին այն է, որ Կորյունյան սույն քաղվածքը գրեթե նույնանում է Կորյունից փոխառված Ագաթանգեղոսի Պատմության մեջ առկա այս վկայակոչման հետ՝ այն տարբերությամբ, որ Ագաթանգեղոսի մոտ կանոնական Աստվածաշնչի «ճարտարի» ձևը պահպանվել է (*grafidi*): Հետաքրքիրն այն է, որ եբրայերենը նմանապես չունի «դպիր» բառը: Սակայն այս առնչությամբ, իբրև եբրայաբանության դրսևորում, դիտելի է նաև Կորյունի կողմից Եսայի Լ 8 և Ամբակ. Բ 2 համարների համապատասխան հատվածների հնարամիտ հարակցումը: Վկայակոչման «Գրեա գտեսիլդ ի տախտակի» հատվածը Ամբակ. Բ 2-ի, իսկ «ի գիրս հաստատեա»-ն՝ Եսայի Լ 8-ի հատվածն է, որի «հաստատեա» ձևը բացակայում է հունարենից (*οἱν kadisas grafan eni nidiol taita kai eis Biblion*) կատարված հայերեն թարգմանության մեջ: Մի հանգամանք, որ ապահովապես վարքագիր հեղինակի մտացի և ինքնուրույն մոտեցման արգասիք է: Բանն այն է, որ Եսայի Լ 8-ի «ի տախտակի և ի գիրս» լրացումները Ս. Գրքի հայ. կանոնական թարգմանության մեջ ունեն մեկ ընդհանուր լրացյալ՝ «գրեա», որ հունարենի համապատասխան հատվածի պատճենումն է: Մինչդեռ եբրայերենում լրացումներից յուրաքանչյուրն իր լրացյալն ունի. Կորյունի «հաստատեա» բառ-հավելումը ըստ երևույթին մոտավոր թարգմանությունն է այս բառին ընդհանուր իմաստով համարժեք եբրայերենի «դրոշմել» հասկացության:

2) Նախնական կամ հեղինակային ազատ և ինքնուրույն թարգմանության հետաքրքիր նմուշ է սա, որ երկրորդվում է Սաղմոս ԽԴ 11 համարի (կետ 21) իմ, իմոյ ձևերի օգտագործմամբ (ի հակակշիռ հայ. կանոնական թարգմ. «քո», «քոյ» ձևերի), որոնք չեն կարող սոսկ գրչական սխալանք լինել: Բանն այն է, որ «իմ», «իմոյ» I դեմքի անձնական դերանունները քերականորեն համաձայնեցված են «մոռացայ» բային: Հատվածս չի կարող պատահական խմբագրման արդյունք լինել նաև այն պատճառով, որ Վարքի նշված կտորում (էջ 62, տ. 25—26) աստվածաշնչական այս արտահայտության դերանունները թվում է, թե պետք է լինեին հոգնակիով, քանի որ իրապես էլ այդպես է պահանջում քաղվածքին նախորդող «իւրեանց» դերանունը: Սակայն քանի որ սուրբգրային վկայակոչումը պետք է զերծ լիներ քերականական անճշտություն-անհամապատասխանությունից, այն մեջ է բերված նախնական կամ ինքնուրույն թարգմանության ընդհանուր նկարագրին հարազատ մնալով: Հետաքրքրականն ու, միաժամանակ, շահեկանն

**** Օգտվել ենք հետևյալ հրատարակություններից՝ The Old Testament is Greek According to the Septuagint. by H. B. Swete. D. D. vol., III, Cambridge, 1894. Novum Testamentum, Graece, Recensionis Tischendorfianae ultimae textum Lipsiae, 1901. The Septuagint Version of the Old Testament, with an English translation and with various readings and critical notes, London, 1971.

այն է, որ հայ կանոնական թարգմանության նկատմամբ եղած այս լուրջ շեղումը առկա է Ագաթանգեղոսի Պատմության Կորյունից պիտառնված հատվածում ևս (տե՛ս կետ 15. Ագաթ. էջ 470, տ. 1): Պարագա, որ լեզվական այս իրականությամբ միանգամայն օրինաչափ վստահություն է առաջ բերում այն մասին, թե Վարքից կատարված ագաթանգեղյան քաղվածքով հաստատագրվող կորյունյան վկայակոչման ցցուն տարբերությունը նախնական թարգմանության թանկագին բեկոր է, որ ապաստանել է 5-րդ դարի հայ ինքնուրույն մատենագրության այս նշանավոր հուշարձանների մեջ³: Սույն եզրակացությունը ըստ երևույթին կարելի է բացատրել նրանով, որ եթե Ս. Գրքի նշյալ համարը բնականաբար նույնանում է կորյունյան վկայակոչման հետ, ապա միևնույն քննելի համարը Գր. Լուսավորչի վարդապետության մեջ ներկայանում է Աստվածաշնչի ընկալյալ ընթերցվածով: Իսկ սա նշանակում է, որ եթե ագաթանգեղյան երկի հեղինակը թույլատու ոգով կարողացել է իր գրվածքում զետեղել սուրբգրային նույն համարի (այն էլ այսպիսի ակնբախ) տարբերություններ, ապա, հավանաբար, մինչև այն օրերը պահպանվել, սակայն թերևս չի գործածվել Ս. Գրքի կանոնակարգված թարգմանության նկատմամբ նախնական, տակավին հեղհեղուկ թարգմանության մի օրինակ⁴, որը իրավունք է վերապահել Ագաթանգեղոսի Պատմության հեղինակին Վարքից կատարած վկայակոչումների մեջ եղած սուրբգրային քաղվածքները բերել նույնությամբ, իսկ ինքնուրույն վկայակոչումների ժամանակ նույն այդ համարները վերցնել արդեն կանոնական թարգմանությունից (տե՛ս Ագաթ. էջ 246, տ. 12, էջ 342, տ. 19, էջ 370, տ. 11 հմմտ. անդ էջ 470, տ. 1 և անդ էջ 218, տ. 8, հմմտ. էջ 437, տ. 13): Սակայն ագաթանգեղյան և կորյունյան համաբնույթ վկայակոչումների զուգահեռ տեղիներում այնուամենայնիվ նկատելի են և ձևեր, որոնք համարյա հավասարապես հարազատ են թե՛ Վարքի սուրբգրային քաղվածքներին և թե՛ Աստվածաշնչի ընկալյալ թարգմանությանը. օրինակ Ա Տիմոթ. Դ 13—16: Կորյունյան վկայակոչման մեջ այս համարը չունի «կանխեսչիր», իսկ Ագաթանգեղոսի երկում վկայակոչված հատվածս, ինչպես նաև՝ Ս. Գրքի կանոնական թարգմանությունն ունեն այդ ձևը: Մինչդեռ Աստվածաշնչի ընկալյալ թարգմանության մեջ առկա «ի դմին» ձևը բացակայում է թե Կորյունի և թե Ագաթանգեղոսի համապատասխան հատվածներում:

Կանոնական «զալն» ցուցական դերանվան փոխարեն առկա բոլոր ձևազրեքում հետևողականորեն կիրառվել է «զայս» ցուցական դերանունը: Իսկ սա նշանակում է, որ «զայս» ընթերցվածը, թեպետ վերապահորեն, նույնպես կարող է նախնականության հայտ ներկայացնել:

Վերոնշյալ լեզվական իրականությունները (ինչը միանգամայն հավանական է) կարող են լինել նաև գրչական կարգի: Այս նկատմամբ բացառելի չէ և այն, որ Վարքում արձանագրված տարբերություններն ընդհանրապես ոչ միայն գրչական, այլև մասնակի խմբագրման արգասիք են:

Լեզվական որոշ իրողությունների հաշվառումն, այնուամենայնիվ, հնարավորություն է տալիս գալ մի եզրակացության, որ ամենևին էլ չի հավակ-

³ Նրա մերձավոր հարաբերությունը Տառնիանոս Ասորու (Բ դար) «Համաբարբառ Ավետարանի» ասորերենից կատարված ենթադրվող հայերեն թարգմանության հետ («Գնացեք ընդ ամենայն աշխարհ». տես «Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք», Վեներիկ, հտ. Բ, 1836, էջ 207) «կրնայ պատահական ըլլալ». Զ. Պ. Էսապալյան, նշվ. աշխ., էջ 583:

⁴ Հմմտ. «Արարատ» 1908, էջ 581 և «Յովհաննու Իմաստասիրի Ամենեցոյ Մատենագրութիւնք», Վեներիկ, 1833, էջ 148:

նում վերջնական լինել: Խոսքը Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» (480-ական թթ. իրականացված) հայերեն թարգմանության մեջ ցրված և աստվածաշնչական վկայակոչումներում խնդրո առարկա երևույթին առնչակից 2 ձևերի մասին է⁵: Մատթ. ԻԸ 19 համարի «հեթանոս» ձևի փոխարեն «Հակաճառության» թարգմանիչը այս հատվածի բոլոր 3 վկայակոչումների ժամանակ էլ դրել է «ազինա» կամ «ազգս» ձևը: Հոով. Ը 35 հատվածի կանոնական «մեկնեացէ» ձևի նկատմամբ երկու անգամ էլ գերադաս է դիտված «որոշեաց» կամ «որոշեացէ» ձևերը: Ընդ որում Մատթ. ԻԸ 19 համարը վկայակոչված է նաև Կորյունի կողմից, որը նույնությամբ կրկնվել է Ագաթանգեղոսի Պատմության մեջ ևս (տե՛ս Ագաթ. էջ 470, տ. 1): Ինչպես արդեն նրկատեցիներ ամեն դեպքում չէ, որ Կորյունից օգտվող Ագաթանգեղոսը նույնությամբ արձանագրում է Վարքի սուրբգրային ընթերցվածը (տե՛ս թեկուզ՝ կետ 16, 19, 23): Դիտելին այն է, որ «ազգս» ձևը նշված համարում ինքնուրույնաբար գործածվել է երեք անգամ (Վարքում մեկ՝ և «Հակաճառութեան» մեջ երկու անգամ), իսկ ընդհանրապես (Ագաթանգեղոսի հետ) չորս: Թեպետ Հոով. Ը 35 համարը չի վկայակոչված Կորյունի կողմից, սակայն այստեղ նմանապես (Յոր Ա 8) կանոնական «մեկնեալ» ձևը տեղի է տվել «որոշեալ» ընթերցվածին:

Հետաքրքրական է նաև 13-րդ կետի սլարավան. Եթե Ագաթանգեղոսի Պատմության Կորյունից պիտառնված սուրբգրային վկայակոչումը բառացիորեն համապատասխանում է Կորյունյան քաղվածքին, ապա Վարդապետության մեջ ինքնուրույնաբար բերված նույն այս համարը թեպետ տարբերվում է Կորյունյան կոչումից և մոտենում Ս. Գրքի կանոնական ընթերցվածին, սակայն, այնուամենայնիվ, չի նույնանում վերջինիս հետ, այլ «յոգոց հանիցես» ընկալյալ ընթերցվածը անտեսվելով, կիրառվել է Կորյունյան «հեծեճեացես»-ը, որն, ի դեպ, առկա է բոլոր ձեռագրերում՝ առանց տարբերքման: Այս նկատմամբ պակաս ուշագրավ չէ 20-րդ կետը: Կորյունյան վկայակոչումն այստեղ զգալի շեղում է արձանագրում Ս. Գրքի ընկալյալ թարգմանությունից: Վարքագիր հեղինակը գտնում է երևույթը լավագույնս ներկայացնող արտահայտություն՝ «աղբիւր բղխեալ ի տան...»: Հ. Ն. Ակինյանի հավաստմամբ սա անհարազատ ընթերցում է: Իբրև ապացույց մատնացույց է արվում մի փոքր վերև «ի բացեալ աղբիւր» արտահայտությունը⁶: Սակայն հարկ է դիտել, որ սուրբգրային վկայակոչմանը անմիջապես նախորդող հատվածում Կորյունը օգտագործում է «բղխեցին Հայոց շնորհք» արտահայտությունը (ե՛ ձեռ. նույնպես «բղխեալ» ձևն է առկա): Ընդհանրապես հինգերորդ դարի հայ մատենագրությանը խորթ չէ «աղբիւր բղխեալ» ձևը: Խնդրո առարկա արտահայտությունը ընթերցվածում մի շարք կերպերով հանդիպում ենք Ագաթանգեղոսի «բղխեաց աղբիւր»—էջ 385, «բղխելոց է աղբիւր»—էջ 390, «բղխեացէ աղբիւր»—էջ 390, «աղբիւրքն...ի...լուսոյ...բղխեալ»—էջ 280, նաև՝ «աղբիւրս մշտնջենաբողիս»—էջ 352 և միայն երկու անգամ՝ «բացեալ...աղբիւր»—էջ 402, 403) և Խորենացու մոտ⁷ (3 անգամ):

⁵ Հր. Աճառեան, Տիմոթեոս Կուզ և Ս. Գրքի նորաբեր թարգմանությունը, «Ծողակաթ» (ժողովածու), Վաղարշապատ, 1913, տե՛ս հեղինակի Բանասիրական ուսումնասիրություններ, Երևան, 1976, էջ 51, 52, 58:

⁶ Տե՛ս Կորին, Վարք Ա. Մաշտոցի... Վիեննա, 1952 էջ 28 (տողատակ): Զոհրապ. հրատ. տողատակում հիշված բոլոր տարբերություններն էլ «բացեալ» ձևը ունեն:

⁷ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Աբեղեանի և Ի. Հարությունեանի Տիպիս 1913, էջք 39, 338, 339, ինչպես նաև՝ Եսայի Լ 25—«ջուր բղխեալ»:

Մեր կարծիքով բառային և բառադարձվածային ընդհանարված միավորները, թեպետ անուղղակիորեն, վկայում են փոքրիշատե որոշ արտահայտված լեզվական ավանդույթի մասին: Իսկ սա նշանակում է, որ Ս. Գրքի Սահակ-Մեսրոպյան նախասկզբնական, տակավին չկանոնակարգված թարգմանության մեջ առկա առավել կենսունակ ընթերցվածները պահպանվելով Կորյունի մատենիկում՝ շարունակել են կենցաղավարել հինգերորդ դարի հայ ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ:

Է) Մաշտոցյան վարքում նկատելի են «որ» հարաբերականի բազմաբար օգտագործման փաստեր: Սուրբգրային վկայակոչումների մեջ արձանագրեցինք հարաբերական-հարաբերչալի թվային համաձայնեցման երկու դեպք՝ «որք խօսեցան» (կետ 8), «որք քեզն լսիցեն» (կետ 23, ձեռ. Ե-ի տարբերակումը) և անհամաձայնության երեք դեպք՝ «զմարգարէսն որ» (կետ 11, բայց այլ ձեռագրերում նաև «զմարգարէսն որք»), «զայնոսիկ, որ քեզն լսիցեն» (կետ 23), «զշնորհացդ որ ի քեզ են» (կետ 23): «Որ—որք» հարաբերականների այսպիսի խաչաձևումով պիտաբնումը, որ, ինչ խոսք, իր տեսակի մեջ կարող է գրչական բնույթի էլ լինել, Ն. Ադոնցի իրավացի դիտումով, այսուամենայնիվ բացատրելի է: Իբրև ապացույց սույն հավաստման՝ վկայակոչվում են Յակ. Ե 10—11 և Տիմոթ. Դ 13—14 համարները, որոնցում նկատելի է «որ»-ի երկակի օգտագործում՝ հարաբերականի և հարաբերչալի համաձայնեցմամբ՝ «զմարգարէսն որք» (Յակ.) ու նույն այս քերականական միավորների «անհամաձայնեցմամբ»՝ «շնորհացդ որ» կամ «զայնոսիկ, որ քեզ լսիցեն» (Տիմոթ.): Քննելի (Ա Տիմոթ. Դ 13—14) հատվածս հունարենում հետևյալ պատկերն ունի՝ *Me amelei toi en soi xarismatos o efode soi*, որտեղ եզակի թվով ներկայացված *xarisma* (շնորհք) բառը համաձայնեցված է նույն թվով դրված *o* (որ) հարաբերականին: Սակայն որքանով հայերենում «շնորհք» բառը քերականորեն չի գիտակցվել իբրև անեզակյան՝ այն համաձայնեցվել է եզակի «որ» հարաբերականին⁸: Սուրբ Գրքի հայերեն թարգմանության մեջ քերականական նման «անհամաձայնություններն» նշանակալից թիվ են կազմում: Դրանք հիմնականում գալիս են ժողովրդախոսակցական լեզվից:

Անհատական թարգմանության տեսակետից բնորոշ է 25-րդ կետը: Հեղինակն այստեղ իրավացիորեն նպատակահարմար է գտել հունական լեզվամտածողության արգասիք «պարծել ի տկարութիւնս» (*en tais asdeneiais*)⁹ ձևը փոխարինել «պարծել տկարութեամբս» առավել հայեցի ձևով:

Ը) Եվ վերջապես քերականական մի շարք աննշան տարբերություններ, որոնք մեծավ մասամբ գրչական բնույթի են (որոշյալ հոդի բացակայություն՝ կետ 1, 3 կամ հավելում՝ կետ 11, 12):

Այսպիսով արձանագրված դիտողություններն եթե ոչ վկայում, ապա գոնե հուշում են այն մասին, որ 1) Կորյունը օգտվել է Աստվածաշնչի «Յոթանասնից» թարգմանությանը նախորդած կամ նրա խմբագրություններից մեկի վրա հիմնված հայերեն թարգմանությունից, 2) Նկատված եբրայաբանություններն (կամ ասորաբանություններն) իրենց բնույթի մասնահատ-

⁸ Ն. Ադոնց, Դարձեալ Կորինի շուրջ, «Հանդես ամսօրեայ», 1928, էջ 84:

⁹ Մի շարք հունարեն ձեռագրերում ավելացվում է *moi*. Տե՛ս *Novum Testamentum Graece cum apparatu critico curavit Eberhard Nestle novis curis claboraverunt Erwin Neste et Kurt Aland. Editio vicesima quinta, Stuttgart, 1968, p. 476.*

կությանը թերևս կորյունյան թարգմանության արգասիք են, 3) Բայց նույն-
քան հնարավոր է, որ վարքագիծի հեղինակը օգտվել է Աստվածաշնչի հա-
յերեն նախասկզբնական, փութով կատարված մի թարգմանությունից, 4) Վը-
կայակոչումների նախնականության մասին վերապահությամբ առաջադրված
վարկածը համարնույթ կամ ուղղակի փաստերի չգոյության պատճառով այն
դարձնում են տակավին քննելի:

